ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/05/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 31 հունվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի հունվարի 31-ին, քննության առնելով «Միավորում հանուն Հայաստանի» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) նախագահ՝ Ժասմեն Բաբայանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված առերևույթ իրավախախտում կատարելու արարքի հիման վրա հարուցված թիվ ՎԻՎ/05/2025 գործը.

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով վերապահված գործառույթը, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ Կուսակցության 2023 թվականի ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունն (այսուհետ՝ Հաշվետվություն) օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել և այն օրենքով սահմանված կարգով ու

ժամկետում չի հրապարակվել: Նշվածի համար Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, 2024 թվականի հոկտեմբերի 28-ին Կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ:

1.2 Կիրառված վարչական տույժի վերաբերյալ Կուսակցության պաշտոնատար անձը պատշաճ ծանուցվել է՝ Օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով: Մասնավորապես, Կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ «Վարչական տույժ կիրառելու մասին» Հանձնաժողովի որոշումը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում 2024 թվականի նոյեմբերի 14-ին, որից հետո վերջինս համարվել է պատշաճ ծանուցված որոշման մասին ծանուցումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, այսինքն՝ 2024 թվականի նոյեմբերի 19-ին:

1.3 2024 թվականի նոյեմբերի 19-ից հետո մեկ ամսվա ընթացքում, այսինքն՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 19-ը Կուսակցության կողմից իրավախախտումը կատարվել է կրկին, այսինքն՝ 2023 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակվել:

1.4 Նշված խախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 9-ին կայացրել է որոշում՝ հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, այն է՝ 2023 թվականի հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու հիմքով վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ ամսվա ընթացքում նույն հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու հիմքով:

1.5 Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 9-ի 01/90-2025 գրությամբ Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանին ներկայացրել է ծանուցում 2024 թվականի հոկտեմբերի 28-ին վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում

Տարեկան հաշվետվությունը սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու առերևույթ խախտման վերաբերյալ՝ ծանուցումը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին հրավիրելով վերջինիս Հանձնաժողով մասնակցելու Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, իսկ ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու: Ծանուցմամբ նշված օրվա դրությամբ Հանձնաժողովում առկա չէր Ժասմեն Բաբայանի կողմից գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված լինելը հավաստող ապացույց (փոստային ծանուցագիրը ստացած լինելը հավաստող փոստային հետադարձ առաքանին):

1.6 Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 23-ի թիվ 01/321-2025 գրությամբ՝ նշված ծանուցումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-15-րդ մասերի հիմքով ուղարկվել է վարույթի մասնակցի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի ղեկավարին և տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (հրապարակային ծանուցման նույնականացման համար՝ 1609315): Սույն գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը ծանուցումն օրենքով սահմանված կարգով համարվել է հանձնված (ստացված):

1.7 2025 թվականի հունվարի 29-ին պատշաճ ծանուցված Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/08/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.8 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Ժասմեն Բաբայանի բացակայությամբ 2025 թվականի

հունվարի 31-ին՝ ժամը 14:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Սույն վարույթի շրջանակներում վարույթի մասնակցի կողմից դիրքորոշում և պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/05/2025 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 28-ին ընդունվել է «Վարչական տույժ կիրառելու մասին» թիվ ՎԻՎ/322/2024 որոշումը՝ Կուսակցության պաշտոնատար անձ Ժասմեն Բաբայանի նկատմամբ, որի վերաբերյալ վերջինս համարվել է պատշաճ ծանուցված 2024 թվականի նոյեմբերի 19-ին:

3.2 2024 թվականի դեկտեմբերի 19-ի դրությամբ Ժասմեն Բաբայանի կողմից 2023 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը Հանձնաժողով չի ներկայացվել, կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակվել:

3.3 Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանը Հանձնաժողովի կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա վարչական տույժ կիրառելուց հետո մեկ ամսվա ընթացքում կատարել է նույն խախտումը՝ Տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել Հանձնաժողով և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակել:

3.4 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցամատյանում առկա տեղեկատվության համաձայն՝ Ժասմեն Բաբայանը հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը:

3.5 Հանձնաժողովի կողմից նախկինում՝ 2024 թվականի հունվարի 24-ին կրկին կիրառվել է վարչական տույժ Ժասմեն Բաբայանի նկատմամբ՝ 2021 և 2022 թվականների ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին տարեկան հաշվետվությունները և դրանց հրապարակման փաստը վկայող ապացույցները սահմանված ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու հիմքով:

3.6 Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը Կուսակցության կողմից Հանձնաժողով չի ներկայացվել Հաշվետվությունը, ինչպես նաև դրա հրապարակման փաստը հավաստող փաստաթուղթը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը:

4.2 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող **մայիսի 31-ից ոչ ուշ**, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը:

4.3 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունն իր հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Հանձնաժողով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների

ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է, կամ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական մարմինը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ վարչական վարույթի մասնակցի հասցեն անհայտ է, ապա ծանուցումն

ուղարկվում է՝ աշխատանքի վայրի հասցեով (վարչական վարույթի նյութերում դրա առկայության դեպքում) և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին (բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական վարույթը հարուցվել է համայնքի կողմից), իսկ վարչական վարույթում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ այդ հասցեներով:

Նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված):

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

4.13 Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

4.14 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն խախտումը, որը կատարվել է կրկին վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրհիսնապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

4.15 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել, եթե կուսակցությունը՝իր գործունեության ընթացքում թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում:

4.16 Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ օրենքի կոպիտ խախտում են համարվում կուսակցության կողմից օրենքով չթույլատրված կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետում պետական բյուջե կամ նվիրատուին փոխանցելու **կամ կուսակցության տարեկան հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետում և կարգով հրապարակելու կամ պետական լիազոր մարմին ներկայացնելու կամ օրենքով սահմանված՝ տարեկան հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրելու օրենքով սահմանված կարգը դիտավորությամբ խախտելը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկվելուց և**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության գործունեությունը կասեցնելու հնարավորության վերաբերյալ գրավոր նախազգուշացվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, խախտումը չվերացնելը:

4.17 Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, խախտումը չվերացնելու դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Անդրադառնալով օրենսդրի կողմից նախանշված՝ Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հանրային հաշվետվողականության ապահովման, ինչպես նաև Կուսակցության կողմից կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության ապահովման նպատակին, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքում հաստատված փաստ է այն, որ ինչպես օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, այնպես էլ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը Կուսակցության կողմից

Հանձնաժողով չեն ներկայացվել Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը, ուստի չի ապահովվել Կուսակցության ստացած և ծախսած միջոցների նկատմամբ հանրային հաշվետվողականության օրենսդրի նպատակը:

Միաժամանակ, նշվածով պայմանավորված, չի ապահովվել նաև օրենսդրի կողմից նախանշված՝ Կուսակցության կողմից կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության վերահսկողության նպատակը, քանի որ, ըստ էության, Կուսակցության կողմից ծավալած գործունեության արդյունքում ծախսած և ստացած ֆինանսական միջոցներն ամփոփվում են Կուսակցության հաշվետվությամբ, որի բացակայության պայմաններում արդեն իսկ անհնար է դառնում կուսակցության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության ապահովումը:

Սույն դեպքում Հանձնաժողովի կողմից էական է գնահատվել նաև այն հանգամանքը, որ 2021 և 2022 թվականների ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին տարեկան հաշվետվությունները և դրանց հրապարակման փաստը վկայող ապացույցները սահմանված ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու հիմքով Ժասմեն Բաբայանի նկատմամբ հարուցված թիվ ՎԻՎ/126/2023 և ՎԻՎ/127/2023 գործերով վարույթները կրկին եզրափակվել են վարչական տույժ կիրառելու մասին որոշումների ընդունմամբ, որից հետո Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 28-ին Կուսակցության նկատմամբ կիրառվել է վարչական տույժ արդեն՝ 2023 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը սահմանված ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու հիմքով: Նշվածի համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարույթի մասնակցի հակահիրավական վարքագիծը փաստացի կրկնվել է:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը, Հանձնաժողովն արձանագրում է, որ «Միավորում հանուն Հայաստանի» կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, այն է՝ Հանձնաժողովի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական տույժ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, կատարվել է նույն

խախտումը՝ Տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելով և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելով:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցամատյանում առկա տեղեկատվության համաձայն՝ Ժասմեն Բաբայանը հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Ժասմեն Բաբայանը՝ որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված կուսակցության պաշտոնատար անձ, ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքի համար:

Հաշվի առնելով, որ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրհիսնապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման (արարքի) բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 28-ին ՎԻՎ/322/2024 որոշմամբ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում նույն խախտումը կրկին կատարելու հիմքով «Միավորում հանուն Հայաստանի» կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի՝ ***400, 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ժասմեն Բաբայանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**